**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբերի 2024 թվականի Ν 229-Ն

## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔԻ ԳՈՏԻԱՎՈՐՈՒՄԸ, ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-14-րդ հոդվածներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի տարածքի տեղական տուրքի համար գոտիավորումը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքում 2025 թվականի տեղական վճարների տեսակները և դրույքաչափերը՝ համաձայն հավելված 3-ի:
4. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ենթակայության ուսումնական հիմնարկներում 2025 թվականի կրթության վճարները՝ համաձայն հավելված 4-ի:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1–ից ծագած հարաբերությունների վրա:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԱՌՈՒՇ
ԱՂԱՔԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ
ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄՀԵՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԻ
ԴԻԼԱՆՉՅԱՆ ՀԵՐՄԻՆԵ
ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈՆԱ
ՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՏՈՌՈՂՅԱՆ ԱՐՏԱԿ
ՏՈՌՈՂՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

2024թ. դեկտեմբերի 24
ք. Գորիս

**ՀԱՎԵԼՎԱԾ 1**
ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի
ավագանու 2024 թվականի
դեկտեմբերի 24-ի N 229-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՏԻԱՎՈՐՈՒՄ

| N | Բնակավայր | Գոտի |
|---|---|---|
| 1 | Գորիս | 1-ին |
| 2 | Վերիշեն | 2-րդ |
| 3 | Խնձորեսկ | |
| 4 | Քարահունջ | |
| 5 | Ակներ | |
| 6 | Շուռնուխ | 3-րդ |
| 7 | Որոտան | |
| 8 | Բարձրավան | |
| 9 | Հարթաշեն | |
| 10 | Ներքին Խնձորեսկ | |

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀՀ Սյունիքի մարզի Գորիս
համայնքի ավագանու 2024
թվականի դեկտեմբերի 24-ի N-
229-Ն որոշման

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը

| Հ/Հ | տեղական տուրքի տեսակները | 1-ին գոտի | 2-րդ գոտի | 3-րդ գոտի |
|---|---|---|---|---|
| 1 | 1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար. հիմնական շենքերի և շինությունների համար՝ | | | |
| | ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար | 50000 | 30000 | 15000 |
| | բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝<br>- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար | 100000 | 50000 | 30000 |
| | 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար | 200000 | 70000 | 50000 |
| | 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար | 200000 | 100000 | 70000 |
| | 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար | 300000 | 150000 | 100000 |
| | գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝<br>- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար | 3000 | 3000 | 3000 |
| | 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար | 5000 | 5000 | 5000 |
| | 2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն | 3000 | 3000 | 3000 |
| 2 | բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով. | | | |
| | գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը: | | | |
| 3 | 3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար | 5000 | 5000 | 5000 |
| 4 | 4) համայնքի վարչական տարածքում ,օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար | 240000 | 100000 | 60000 |
| 5 | 5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ. | _ | _ | _ |
| 6 | 6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար | 45000 | 30000 | 18000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 7 | 7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ քսան հազար դրամ. | _ | _ | _ |
| 8 | 8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ. | 75000 | 60000 | 45000 |
| 9 | 9) համայնքի վարչական տարածքում,օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող, ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության | | | |
| | ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝<br>- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 6500 | 4500 | 3500 |
| | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 7600 | 5100 | 3100 |
| | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 9800 | 6600 | 4000 |
| | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 15100 | 10100 | 6100 |
| | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 18800 | 12600 | 7600 |
| | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 33800 | 22500 | 13500 |
| | բ. օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝<br>- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 6500 | 4500 | 3500 |
| | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 7600 | 5100 | 3100 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 9800 | 6600 | 4000 |
| | - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 15100 | 10100 | 6100 |
| | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 18800 | 12600 | 7600 |
| | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 33800 | 22600 | 13600 |
| 10 | 10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար. | 350 | 200 | 100 |
| 11 | 11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար. | | | |
| | ա. առևտրի օբյեկտների համար | 50000 | 25000 | 15000 |
| | բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար | 50000 | 30000 | 25000 |
| | գ. բաղնիքների (սաունաների) համար | 375000 | 250000 | 150000 |
| | դ. խաղատների համար | 750000 | 500000 | 300000 |
| | ե. շահումով խաղերի համար | 375000 | 250000 | 150000 |
| | զ. վիճակախաղերի համար | 120000 | 75000 | 45000 |
| 12 | 12) համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝ | | | |
| | ա. հիմնական շինությունների ներսում՝<br>- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 3800 | 2500 | 1500 |
| | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 4000 | 3000 | 2000 |
| | - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 7600 | 5100 | 3100 |
| | - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 11300 | 7600 | 4600 |
| | - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 15100 | 10100 | 6100 |
| | - 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 22600 | 15100 | 9100 |
| | բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝<br>- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 1000 | 1000 | 1000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | - 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 2000 | 1000 | 600 |
| | - 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 4000 | 2000 | 1200 |
| | - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 8000 | 4000 | 2400 |
| | - 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 15000 | 7500 | 4500 |
| | - 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 25000 | 12500 | 7500 |
| 13 | 13) քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար. օրացուցային տարվա համար | 5000 | 0 | 0 |
| 14 | 14) ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ | | | |
| | ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 2000 | 1500 | 1000 |
| | բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 3000 | 2000 | 1500 |
| | գ. սոցիալական գովազդի համար | 0 | 0 | 0 |
| | դ. այլ արտաքին գովազդի համար | 800 | 600 | 450 |
| | ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար | 300 | 200 | 120 |
| 15 | 15) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար | 100000 | 75000 | 50000 |
| 16 | 16) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար | 10000 | 7500 | 5000 |
| 17 | 17) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար | 250000 | 150000 | 100000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 18 | 18) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝<br>ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար | 2500000 | 2000000 | 1500000 |
| | բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար | 5000000 | 4000000 | 3000000 |
| | գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար | 7000000 | 5500000 | 4000000 |
| | դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար | 7500000 | 5000000 | 3000000 |
| | | | | |

ՀԱՎԵԼՎԱԾ 3
ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու
2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 229-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքում սահմանվում է տեղական վճարների հետևյալ տեսակները և դրույքաչափերը՝

1. Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 15.000 ՀՀ դրամ:

2. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 15.000 ՀՀ դրամ:

3. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 15.000 ՀՀ դրամ:

4. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10.000 ՀՀ դրամ:

5. Համաձայն ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոման համայնքի տարածքում տեղակայված անշարժ գույքի հասցեավորման համար մատուցված ծառայության դիմաց՝ 3.000 ՀՀ դրամ:

6. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝

1) մրցույթների մասնակցության համար՝ 5.000 ՀՀ դրամ.

2) աճուրդի մասնակցության համար՝ 10.000 ՀՀ դրամ:

7. Համայնքի կողմից համայնքի բնակչությանը մատակարարվող խմելու ջրի մեկ խորանարդ մետրի համար գանձվող վճար՝ 100 ՀՀ դրամ:

8. Բազմաբնակարան շենքերի սպասարկման ամսական վճարի չափը, բազմաբնակարան շենքի բնակարանի ընդհանուր մակերեսի հաշվարկով, 1 քմ-ի համար 8 ՀՀ դրամ,.

9. Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար՝ աղբահանության վճար՝

1) Գորիս քաղաքում՝ ըստ հասցեի փաստացի բնակվող յուրաքանչյուր մեկ բնակչից գանձվող աղբահանության վճար՝ 350 ՀՀ դրամ.

2) Գյուղական բնակավայրերում՝ ըստ հասցեի փաստացի բնակվող յուրաքանչյուր մեկ բնակչից գանձվող աղբահանության վճար՝ 200 ՀՀ դրամ.

3) ըստ ոլորտների կենցաղային, ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբագոյացման չափաքանակներն համաձայն աղյուսակի /կցվում է հավելված 3-ի աղյուսակը/:

10. Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին՝ շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար՝ աղբահանության վճար՝

1) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 500 ՀՀ դրամ

2) ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 1.000:

11. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ փոխհատուցման վճար՝ մեկ փաստաթղթի համար՝ 1.000 ՀՀ դրամ:

12. Համայնքի կողմից իրավաբանական ու ֆիզիկական անձանց տրամադրվող հատուկ տեխնիկայի և սարքավորումների վարձակալության վճար՝

12.1 իրավաբանական անձանց՝

1) էքսկավատորի 1 ժամ աշխատանքի համար՝ 14.000 ՀՀ դրամ

2) էքսկավատորի հիդրոմուրճով 1 ժամ աշխատանքի համար՝ 22.000 ՀՀ դրամ

3) գրեյդերի 1 ժամ աշխատանքի համար՝ 15.000 ՀՀ դրամ

4) մինիամբարձիչի 1 ժամ աշխատանքի համար՝ 10.000 ՀՀ դրամ

5) բեռնատարով 1 կմ բեռնափոխադրման համար՝ 1.000 ՀՀ դրամ /մինչև 10 կմ 10.000 ՀՀ դրամ/

6) ավտոմանիպուլյատորով 1 ժամ աշխատանքի համար՝ 18.000 ՀՀ դրամ

7) վերամբարձ կռունկով 1 ժամ աշխատանքի համար՝ 24.000 ՀՀ դրամ

12.2 ֆիզիկական անձանց՝

1) էքսկավատորի 1 ժամ աշխատանքի համար՝ 12.000 ՀՀ դրամ

2) էքսկավատորի հիդրոմուրճով 1 ժամ աշխատանքի համար՝ 20.000 ՀՀ դրամ

3) գրեյդերի 1 ժամ աշխատանքի համար՝ 13.000 ՀՀ դրամ

4) մինիամբարձիչի 1 ժամ աշխատանքի համար՝ 8.000 ՀՀ դրամ

5) բեռնատարով 1 կմ բեռնափոխադրման համար՝ 1.000 ՀՀ դրամ /մինչև 10 կմ 10.000 ՀՀ դրամ/

6) ավտոմանիպուլյատորով 1 ժամ աշխատանքի համար՝ 15.000 ՀՀ դրամ

7) վերամբարձ կռունկով 1 ժամ աշխատանքի համար՝ 20.000 ՀՀ դրամ

13. Տիկնիկային թատրոնի ներկայացման վճար՝

1) մինչև 30 րոպե տևողությամբ ներկայացումների համար՝ մեկ անձի համար 250 ՀՀ դրամ

2) 30 րոպեից ավել՝ մեկ անձի համար 400 ՀՀ դրամ

Աղյուսակ
ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի
ավագանու 2024 թվականի դեկտեմբերի
24-ի N 229-Ն որոշման
Հավելված 3-ի

## ԱՂՅՈՒՍԱԿ

**Ըստ ոլորտների կենցաղային, ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբագոյացման չափաքանակների**

| Հ/հ | Աշխատանքի նկարագրություն | Չափի միավոր | Աղբագոյացման նորմա խմ/ամիս | Աղբի տեղափոխման արժեք դրամ/խմ | Միավորի արժեք դրամ/ամիս |
|---|---|---|---|---|---|
| 1. | Հիվանդանոցներ | Մահճակալ | 0.051 | 2950 | 150 |
| 2. | Հյուրանոցներ /հյուրատներ/, առողջարաններ | Տեղ | 0.061 | 2950 | 180 |
| 3. | Նախակրթարաններ | Սան | 0.016 | 2950 | 47 |
| 4. | Ուսումնական հաստատություններ | Սովորող | 0.008 | 2950 | 24 |
| 5. | Մշակույթի օջախներ | Տեղ | 0.013 | 2950 | 38 |
| 6. | Մթերային խանութներ | Քմ մակերես | 0.025 | 2950 | 74 |
| 7. | Շուկաներ, բացօթյա առևտրի օբյեկտներ | Քմ մակերես | 0.075 | 2950 | 221 |
| 8. | Շինանյութի խանութներ | Քմ մակերես | 0.025 | 2950 | 74 |
| 9. | Արտադրական ապրանքների մանրածախ և մեծածախ առևտրի խանութներ, պահեստներ | Քմ մակերես | 0.018 | 2950 | 53 |
| 10. | Հասարակական սննդի օբյեկտներ | Քմ մակերես | 0.061 | 2950 | 180 |
| 11. | Հիմնարկներ, գրասենյակներ, բանկեր, վարկային կազմակերպություններ | Քմ մակերես | 0.025 | 2950 | 74 |
| 12. | Արտադրական ձեռնարկություններ | Քմ մակերես | 0.025 | 2950 | 74 |
| 13. | Բենզալցակայաններ, գազալցակայաններ | Քմ մակերես | 0.011 | 2950 | 32 |
| 14. | Այլ սպասարկման օբյեկտներ | Քմ մակերես | 0.011 | 2950 | 32 |
| 15. | Ջրամասեր | Ջինծառայող | 0.008 | 2950 | 24 |

Սույն աղյուսակի 6-14-րդ կետերում նշված օբյեկտների մակերեսը 550 քմ-ից ավելանալու դեպքում յուրաքանչյուր ավել 1 քմ մակերեսի համար հաշվարկը կատարվում է սահմանված արժեքի 50 տոկոսի չափով:

ՀԱՎԵԼՎԱԾ 4
ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի
ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի
N 229-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ենթակայության ուսումնական հիմնարկներում սահմանվում է կրթության վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1. Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝

1) Գորիս քաղաքում ամսական 4.500 ՀՀ դրամ.

2) Գյուղական բնակավայրերում ամսական 4.500 ՀՀ դրամ:

2.Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝

1) երաժշտական ուսումնական հաստատություններում մեկ երեխայի համար ամսական 2.000 ՀՀ դրամ.

2) մանկապատանեկան մարզադպրոցի մեկ երեխայի համար ամսական 1.200 ՀՀ դրամ.

3) արվեստի դպրոց մեկ երեխայի համար ամսական 1.100 ՀՀ դրամ: